ԲԵԹՂԵՀԷՄԻ ԱՅՐԻ ՍՈՒՐԲ ՄԱՆԿԻԿԸ

Լեռների լանջում. քարայրի խորքում
Շողում է կրակ երկնային սիրոյ
Կայծերով վառուած մի նորոգ կեանքի,
Շողում է կրակ - այնտեղ յաւիտեան
Լոյսը չի հանգչում,
Յոյսը չի խաբում:

Նե՛րս մտիր այրը - հովիւ ու գառներ,
Գառների մսուր - անշուք խանձարուր,
Ահա Մանկիկը անմեղ ու անբիծ
Ժպտում է պայծառ - սէր է մեզ շնչում.
Ահա՛ լալիս է - այդ նրա սիրտն է,
Որ կեանքի շեմքից, ծաղիկ օրերից,
Մարդկանց վշտերի համար ճմլւում,
Մարդկանց մեղքերին ներումն աղերսում:

Անկեղծ զղջումով, մաքուր արցունքով
Խոնարհուիր, ընկեր, համբուրիր նրան -
Նա քեզ կը ներէ, նա քեզ յոյս կը տայ
Եւ դու զօրացած կըրիր քո խաչը -
Էլ շղթայ չկայ,
Էլ արիւն չկայ:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@